ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհաքաղաքական փոփոխությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումների համատեքստում մշակույթը և ստեղծարար ոլորտները դարձել են ազդեցիկ գործոններ սոցիալական և տնտեսական զարգացման, նորարարությունների, միջմշակութային երկխոսության խթանման գործում:

«Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունը» (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանում է մշակույթը՝ որպես ազգային ինքնության կայացման և համընդհանուր արժեքային հենքով միջազգային համակեցության պայման, ազգային անվտանգության ապահովման գրավական, հայապահպանության երաշխավորը սփյուռքում, արժեքահենք քաղաքացու կրթության և դաստիարակության գրավական, հանրային համերաշխության և բարեկեցիկ հասարակության ձևավորման երաշխիք, միջազգային համագործակցության ընդլայնման գործոն:

Ռազմավարության հիմքում ընկած է ազգային ինքնության և արժեքների հենքի վրա ստեղծված մշակույթի պահպանումը, զարգացումը, տարածումն ու հանրահռչակումը, ազգային և համամարդկային արժեքների հետ զուգորդումը և հաղորդակցումը, համընդհանուր ներառականության ապահովումը, մշակույթի և արվեստի հասանելիությունը, ստեղծարարության, փորձարարական ու նորարարական ձևերի խրախուսումը, մշակույթի տնտեսականացումը, կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումն ու կարողությունների զարգացումը, մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրումը, պետություն-մասնավոր համագործակցության փոխշահավետ մեխանիզմների խթանումը, ժողովրդավարական արժեքների գերակայության ամրապնդումը, աշխարհի մշակութային քարտեզում հայկական մշակույթի դիրքավորումը:

Ռազմավարությունն ուղենշում է մինչև 2027 թվականը մշակույթի ոլորտի զարգացման 4 հիմնական ուղղություններ, որոնք ամբողջացնում են ոլորտի զարգացման միտումները մշակութային ժառանգության և ստեղծարար ոլորտների զարգացման համատեքստում: Այդ ուղղություններն են՝

- մշակութային ժառանգության պահպանությունը և փոխանցումը սերունդներին,
- մշակութային և ստեղծարար ոլորտների արդիականացումը,
- նորարարությունը, մշակութային հասանելիությունը և ներառականությունը,
- միջազգային համագործակցությունը:

Ռազմավարության 2025 թվականի առաջընթացի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված ռազմավարական չորս ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով ըստ ոլորտային նպատակների:

Միևնույն ժամանակ, 2025 թվականին մշակույթի ոլորտում շեշտադրվել են մշակույթի տնտեսականացման ինստիտուցիոնալ կառուցակարգերի ստեղծման և թվայնացման ուղղությունները:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

Ռազմավարությունը զարգացման գերակա ուղղություն է սահմանել մշակութային ժառանգության պահպանության և անխաթար փոխանցման ապահովումը, որն իրականացվում է 4 հիմնական ոլորտների շրջանակում:

Պատմության և մշակույթի հուշարձանների ոլորտ[1]

Պատմության և մշակույթի հուշարձաններ հանդիսացող քաղաքացիական, պետականության խորհրդանիշ հանդիսացող ճարտարապետական հուշարձանների (այդ թվում՝ ամրոցների և բերդերի) ամրակայման, նորոգման, վերականգնման և ենթակառուցվածքների ստեղծման նպատակով՝ իրականացվել են 31 հուշարձանների վերականգնման աշխատանքներ (23-ը՝ ՀՀ պետական բյուջեի հատկացումներով), որոնցից 8-ի աշխատանքներն ավարտվել են՝

- Արագածոտնի մարզի «Ագարակ» հնավայրի վաղ բրոնզեդարյան կացարանների, միջնադարյան համալիրի ամրակայում և ծածկերի կառուցում,
- Լոռու մարզի Լոռի Բերդի միջնաբերդի եկեղեցու վերականգնում,
- Լոռու մարզի Լոռի Բերդի միջնաբերդի բաղնիքի (մեծ) վերականգնում,
- Լոռու մարզի Ամրակիցի Սբ Նիկոլայ Հրաշագործ եկեղեցու վերականգնում,
- Տավուշի մարզի Կիրանցի Սբ Երրորդություն եկեղեցու վերականգնում,
- Կոտայքի մարզի Բյուրականի Սբ Աստվածածին եկեղեցու վերականգնում,
- Լոռու մարզի Քոբայրավանք վանական համալիրի մատուռների տանիքածածկերի վերականգնում,
- Սյունիքի մարզի Զանգեզուրի դարպասների (Սյունիքի Զանգեր) վերականգնում և նորոգում:

ՀՀ պետական բյուջեից 2025 թվականին հատկացվել է շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ, որը 2022 թվականի նույն ցուցանիշը գերազանցում է 542%-ով, իսկ հուշարձանների թիվն ավելացել է 14-ով: Կառուցվել է 2 տեղեկատվական զբոսաշրջային կենտրոն (Լոռի Բերդում և Զորաց քարերում), ևս մեկի շինարարության աշխատանքները մոտենում են ավարտին (Բջնի ամրոց):

---

[1] *Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է կատարելագործել բնագավառի իրավական դաշտը, կանոնակարգել կառավարման գործընթացում ներգրավված ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների գործառույթները և լիազորությունները, կատարելագործել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների լիարժեք և ամբողջական վերահսկողության գործընթացները, վտանգված և վնասված հուշարձանների վերականգնման, բարեկարգման աշխատանքները, կազմակերպել մշակութային զբոսաշրջության զարգացման նպատակով պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի օգտագործումը, ստեղծել պայմաններ ժամանակակից պահանջներով հնագիտական ժառանգության հետազոտությունների և հեռանկարային զարգացման համար, նպաստել միջազգային գիտական համագործակցության ընդլայնմանը:*



Գծապատկեր 1. Հուշարձանների վերականգնմանն ուղղված ՀՀ պետական բյուջեի հատկացումների դինամիկան 2022-2025 թվականներին

Ընդհանուր առմամբ, 2018-2025թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են մոտ 40 վանական համալիրների և եկեղեցիների վերականգնման աշխատանքներ: Միայն կրոնական բնույթի հուշարձանների վերականգնման համար այս ընթացքում պետությունը ծախսել է ավելի քան 1,6 մլրդ ՀՀ դրամ:

Պետություն-մասնավոր համագործակցությամբ ավարտվել են Երևանի «Կարմիր կամուրջ» հուշարձանի վերականգնման աշխատանքները: ՀՀ կառավարության որոշմամբ «Արտաշատ մայրաքաղաք» պատմամշակութային արգելոցի տարածքը 5,8 հա-ից դարձել է 83,8 հա:

Մշակութային ժառանգության հանրահռչակման նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում է դժվարամատչելի վայրերում տեղակայված հուշարձանների հանրահռչակում, մասնավորապես 2025թ. իրականացվել է 4 հուշարձանի հանրահռչակում: Ընդհանուր առմամբ 2025թ. դրությամբ իրականացվել են՝ 16 հուշարձանի հանրահռչակում, 73 տեղեկատվական արշավներ, 125 արտաքին գովազդի հարթակներ:

Իրականացվել է 11 բրենդավորում, սոցիալական ցանցերում հրապարակվել է 211 ռիլ և 102 անիմացված հոլովակ, կազմակերպվել է 86 գովազդային արշավ՝ 173 գովազդով: Սոցիալական ցանցերում ընդհանուր հրապարակումների քանակը՝ 1972:

2025 թվականին իրականացվել է 410 հուշարձանի տվյալների մուտքագրում հուշարձանների էլեկտրոնային շտեմարանում: Ընդհանուր առմամբ, 2025թ. դրությամբ իրականացված է 800 հուշարձանի տվյալների մուտքագրումը: 2023-2027թթ. համար ընդհանուր իրականացվելու է 950 հուշարձանի տվյալների մուտքագրում:

710 նորահայտ հուշարձան ընդգրկվել է ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Թանգարանների ոլորտ[2]

Ներդրված է 2024 թվականին ընդունված «Թանգարանների մասին» ՀՀ օրենքը՝ որպես անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ թանգարանների ոլորտը կարգավորող առաջին մայր օրենք (այսուհետ՝ Օրենք):

Օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, սահմանում թանգարանների տեսակները, գործառույթները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության սկզբունքները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանության հանձնելու և արտահանման գործընթացները:

Ընդունվել է «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» օրենքը, որն ուղղված է արվեստի ստեղծագործությունների վաճառքի մեխանիզմների և գործիքակազմի զարգացմանը, շուկայի ձևավորմանը, արվեստագետի վարկանիշի բարձրացմանը, ինչպես նաև հայ և օտարազգի արվեստագետների, գալերիստների, քննադատների միջև նոր ինստիտուցիոնալ կապերի ձևավորմանը, միջազգային շուկաներում հայկական մշակույթի և ստեղծարար ոլորտների ինտեգրմանը ու Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը: ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1940-Ն որոշմամբ հաստատվել է «Մշակութային աճուրդների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը», որով սահմանվում են մշակութային աճուրդի կազմակերպչին և մշակութային աճուրդի տանը ներկայացվող պահանջներն ու լիցենզավորման համար նրանց ներկայացվող պահանջները: Ինչպես նաև փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ոլորտը կարգավորող մի շարք օրենքներում ու ենթաօրենսդրական ակտերում:

Թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացման, նոր ենթակառուցվածների ներդրման և ընդլայնման գործողությունների շրջանակում 2024 թվականին գործարկվել էր Թանգարանների էլեկտրոնային տոմսային միասնական համակարգը, ինչպես նաև՝ համակարգի բջջային հավելվածը և եռալեզու կայքը՝ museumsarmenia.am: Գործարկված համակարգի միջոցով հասանելի է դարձել թանգարաններում վաճառված տոմսերի մասին մանրամասն տեղեկատվությունը, ինչը թափանցիկ և տեսանելի է դարձնում ոլորտի գործունեությունը: Համակարգը նաև նոր պայմաններ է ստեղծում տարբեր թանգարանների միասնական տոմսերի, զբոսաշրջային փաթեթների հետ համադրման, թանգարանային հուշանվերների առցանց վաճառքի և այլ ուղղություններով: Համակարգին 2025 թվականին միացել են ևս 18 թանգարանների մասնաճյուղեր՝ ընդհանուր թիվը հասցնելով 44-ի: Համակարգին միացած թանգարաններում կտեղադրվեն 20 սարքավորումներ և 10 հատ գերզգայուն QR կարդացող սարք:

---

[2] *Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է թանգարանային հավաքածուների պահպանությունը և շարունակական հանրայնացումը, թանգարանի՝ որպես սոցիալ-կրթական ինստիտուտի կայացումը, հասարակության բոլոր սոցիալական շերտերի և տարիքային խմբերի, հատկապես՝ երեխաների և պատանիների ոչ ֆորմալ կրթության ապահովումը: Որպես գերակայություն է սահմանվել թանգարանների կառավարման արդյունավետության բարձրացում, թանգարանային տարածքների արդիականացում և ազգային ֆոնդի առավելագույն հանրահռչակումը:*

Ինչպես նաև մասնավորի հետ համագործակցությամբ, ներկայում 2 կազմակերպությունում փորձարկվում է թատերահամերգային կազմակերպությունների տոմսերի վաճառքի միասնական հարթակը:

Թանգարանների վարչատնտեսական գործունեության միասնական կառավարման և մարքեթինգային միասնական քաղաքականության իրականացման նպատակով՝ գործում է Մշակույթի զարգացման հիմնադրամը:

Մշակույթի զարգացման հիմնադրամի առաքելության շրջանակում իրականացվել է թանգարանների մարքեթինգային, վարչատնտեսական և ֆինանսական գործառույթների փոխանցում և արտապատվիրակում հիմնադրամին՝ որպես միասնական կառավարման կենտրոնի: Արդյունքում ապահովվել է կազմակերպչական և կառավարչական ռեսուրսների կենտրոնացում մեկ հարթակում, ինչը հնարավորություն է տվել բարձրացնել կառավարման արդյունավետությունը և նվազեցնել գործառութային կրկնօրինակումը:

Թանգարանների արտապատվիրակման միասնական մոդելի ներդրման արդյունքում ապահովվել է գործունեության հիմնական գործառույթների համակարգային ինտեգրում, օպերատիվ կառավարման մեխանիզմների ուժեղացում և ծախսերի օպտիմալացում: Միաժամանակ, միասնական մարքեթինգային քաղաքականության իրականացումը, վաճառքի և ծառայությունների կենտրոնացված կառավարումը, ինչպես նաև գործընկերային և հովանավորչական ծրագրերի համակարգված զարգացումը նպաստել են թանգարանների արտաբյուջետային եկամուտների աճին:

Կենտրոնացված ֆինանսական պլանավորման և վերահսկման շնորհիվ թանգարանները ստացել են ավելի կայուն և կանխատեսելի ֆինանսական միջավայր, ինչը հնարավորություն է տվել ընդլայնել վճարովի ծառայությունների շրջանակը, մեծացնել այցելությունների թիվը և ապահովել արտաբյուջետային միջոցների կայուն ավելացում:

Կապիտալ ներդրումներ են արվել 19 թանգարաններում՝ շենքային պայմանների բարելավման և գույքով հագեցման համար: Մեկնարկել են թանգարանների հուշանվերային արտադրանքի և վաճառասրահի ենթակառուցվածքի զարգացման աշխատանքները, որոնց շրջանակում հաստատվել է 47,6 մլն ՀՀ դրամ արժողությամբ 10 անուն հուշանվերային արտադրանքի շարքը՝ 6 թանգարանի համար: Արդյունքում թանգարանների սեփական եկամուտներում ավելացել են հուշանվերների վաճառքի մասնաբաժինները՝ կազմելով տարեկան միջինում 5,2 մլն ՀՀ դրամ կամ տարեկան ընդհանուր եկամտի 10%-ը և առավելագույնը՝ 32,2 մլն ՀՀ դրամ կամ տարեկան ընդհանուր եկամտի 42,3%-ը:

Համեմատության համար նշենք, որ 2024 թվականին թանգարանների արտաբյուջեն կազմել է 1,42 մլրդ դրամ, իսկ 2025 թվականին արտաբյուջեն գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ կազմելով 1,63 մլրդ դրամ:

Թանգարանների այցելությունների թիվը կազմել է 1 353 952, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 9%-ով, իսկ 2021 թվականի ցուցանիշը՝ շուրջ 40%-ով: «Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառումներին միացել է 108 թանգարան, որոնք սպասարկել են ավելի քան 245 000 այցելուի՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 54%-ով:



Գծապատկեր 2. ՀՀ թանգարանների այցելուների թվի դինամիկան 2022-2025 թվականներին

Շարունակվել է նաև պետական միջոցներով հավաքածուների համալրման գործընթացը՝ 4 թանգարան համալրվել է 16 մշակութային արժեքներով: Ընդհանուր առմամբ, թանգարանային հավաքածուների համալրման համար պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 332 մլն ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է գրեթե 29 անգամ:

Թվայնացվել և մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրվել՝ 32574, հաստատվել՝ 23370 մշակութային արժեքի վերաբերյալ տեղեկույթ:

Թանգարանային հավաքածուների միջազգայնացման, միջթանգարանային համագործակցության ընդլայնման շրջանակում կազմակերպվել են 18 միջազգային ժամանակավոր ցուցադրություններ: Հայաստանի թանգարանները մասնակցել են նաև մի շարք ցուցադրություններում՝ Օմանում, Ռուսաստանի Դաշնությունում և ԱՄԷ-ում:

Վերջին տարիներին թանգարանները (որպես ոչ ֆորմալ կրթական տարածքներ) զգալիորեն ընդլայնել են կրթական գործունեությունը՝ առաջարկելով բազմաբովանդակ ծրագրեր տարիքային, սոցիալական խմբերի համար: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում գրադարաններում և թանգարաններում իրականացվել է 2409 կրթամշակութային ծրագիր, որին մասնակցել է 59 295 այցելու, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 53 %-ով:

Կարողությունների զարգացման ուղղությամբ շարունակվել են միջազգային համագործակցության ծրագրերը: Մասնավորապես 2025 թվականին Ֆրանսիայի ժառանգության ազգային ինստիտուտի հետ համատեղ իրականացվել է դասընթաց-վարժանք Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում, Հայաստանի պատմության թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, Հայաստանի ազգային գրադարանում, որի շրջանակում վերապատրաստվել են պետական և համայնքային ենթակայությամբ գործող թանգարանների և գրադարանների շուրջ 180 աշխատակիցներ: Ընդհանուր առմամբ 2022-2025թթ. վերապատրաստվել է ոլորտի շուրջ 580 մասնագետ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտ[3]

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման կազմակերպման շրջանակում 8 մարզերի 30 համայնքներում իրականացվել է 11 ծրագիր՝ 15 հազար մասնակցով:

Շարունակվել է ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման աշխատանքները՝ 2025 թվականի տարեվերջի դրությամբ գրանցված է 108 արժեք, իսկ Ղարաբաղից բռնի տեղահանվածների ոչ նյութական մշակութային ժառանգության՝ 10 արժեք:

Շարունակաբար համալրվում է ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանը՝ https://int-heritage.am/ կայքէջում, որն ունի տարբեր բաժիններ: Այստեղ ներառված է նաև Հայաստանի համայնքներում կիրառվող ուտեստների շտեմարանը՝ (400 -ից ավելի ազգային ուտեստի տարրերով): Միաժամանակ շտեմարանը համալրվել է 2025 թվականի հունիսի 21-22-ին Գավառում անցկացված՝ Արհեստների միջազգային 4-րդ փառատոնի ընթացքում, ՄԿՈՒ հաստատությունների կողմից գույքագրված ազգային ուտեստի տարրերով: Կայքէջում գործում է նաև «Արհեստագործություն» բաժինը, որտեղ առանձին հղումներով ներկայացված են արհեստագործության 10 ուղղությունները:

Գրադարանների ոլորտ[4]

Շարունակվել են գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակի համալրման աշխատանքները: Գրավոր ժառանգության թվայնացման գործընթացի շրջանակում 2025 թվականին թվայնացված էջերի թիվը կազմում է՝ 634 468 էջ: Ընդհանուր առմամբ թվայնացվել է՝ 15 228 732 էջ, որոնք հասանելի են դարձել «Հայ գիրք» ու «Հայ պարբերական մամուլ» շտեմարաններում:

Գրադարանային ծառայությունների մատուցման արդիականացման նպատակով, գրադարաններում ներդրվում է էլեկտրոնային սպասարկման ծրագիրը: Էլեկտրոնային սպասարկում իրականացվում է «Հայաստանի ազգային գրադարան», «Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան», «Շիրակի մարզային գրադարան» և «Արմավիրի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ների կողմից:

Իրականացվել է 671 567 էկեկտրոնային սպասարկում, որից՝

- Հայաստանի ազգային գրադարանը՝ 457513,

---

[3] *Ոլորտի պետական քաղաքականությունը ուղղված է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, փոխանցմանն ու հանրայնացմանը, հանրության իրազեկվածությանը, ժառանգության պահպանման գործընթացներում ներգրավմանը, ժառանգության ճանաչելիության բարձրացմանը, տեղի ու դերի արժևորմանը՝ երկրի կայուն զարգացման նպատակների իրագործման համատեքստում:*

[4] *Ոլորտի պետական քաղաքականության նպատակն է գրադարանային հավաքածուների պահպանությունը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվայնացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացումը, համալրման անընդհատության ու գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, գրադարանների հավասարաչափ բաշխվածության և զարգացվածության ապահովումը, գրադարանների շուրջ համայնքային մշակութային կյանքի կազմակերպման հայեցակարգերի մշակումը:*

- Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ 144 054,
- Շիրակի մարզային գրադարանը՝ 70 000,
- Արմավիրի մարզային գրադարան՝ 1350:

2025 թվականի դրությամբ մարզային բոլոր գրադարաններն ընդգրկված են «Հայաստանի գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ» ծրագրում, որի արդյունքում զգալիորեն ընդլայնվել են գրադարանների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների ցանկը՝ ընդգրկելով նաև կրթական ծրագրերը և ամառային դպրոցները:

Մարզային մշակութային համաչափ զարգացման, համայնքային գրադարանների դերի վերարժևորման և ընդլայնման ուղղությամբ մշակվել էր համայնքներում մշակութային, կրթական, տեղեկատվական և ժամանցային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) հայեցակարգը: Մեկնարկել է 5 մարզում մշակութաժամանցային կենտրոնների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի ձեռքբերման աշխատանքները:

Գրադարանային ոլորտում մասնագիտական կարողությունների կատարելագործման և զարգացման նպատակով, «Գրադարանային ասոցիացիայի և հաստատությունների միջազգային դաշնություն» (IFLA) կազմակերպության հետ համագործակցությամբ, Հայկական գրադարանային ասոցիացիան կազմակերպել է «Գրադարանների վերափոխումը դինամիկ համայնքային և մշակութային կենտրոնների» խորագրով վերապատրաստման ծրագիր, որին մասնակցել են գրադարանային ոլորտի շուրջ 100 մասնագետ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մշակութային և ստեղծարար ոլորտներում կառավարման մոդելների արդիականացման, ինչպես նաև ոլորտի համակարգային բարեփոխումների առաջ մղման նպատակով մշակվել են ոլորտները կարգավորող օրենքներից բխող իրավական ակտեր: Ընդունվել է «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» օրենքը, որն ուղղված է արվեստի ստեղծագործությունների վաճառքի մեխանիզմների ու գործիքակազմի զարգացմանը, շուկայի ձևավորմանը, արվեստագետի և Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը:

Ընդունվել է ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի «Ֆիլմարտադրության ոլորտում ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, մերժելու և դադարեցնելու կարգն ու պայմանները, ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող՝ ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ցանկը և վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները հաստատելու մասին» N 412-Ն, ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 4-ի «Մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներին և մրցանակաբաշխություններին մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին, այդ թվում՝ ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողներին դրամական խրախուսում տրամադրելու (վճարելու) կարգը և չափերը

հաստատելու մասին» N 1280-Ն որոշումները: Մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում գործող և նոր ստեղծվող մշակութային կազմակերպություններին «համապետական», «տարածքային» կամ «տեղային» կարգավիճակ շնորհելու, փոփոխելու և դադարեցնելու, նախապայմանների և չափանիշների կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ոլորտի արդյունավետության բարձրացման և ՊՈԱԿ-ների ֆինանսական ինքնավարությունը խթանելու նպատակով, շարունակվել է թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդնումը: 2025 թվականին Ֆինանսավորման նոր մոդելին անցել է ևս մեկ կազմակերպություն՝ Երևանի կամերային թատրոնը (մինչ այդ ներդրված էր 2՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական և Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոններում): Ներկայում նշյալ մոդելով արդեն իսկ աշխատում է 3 կազմակերպություն՝ գործող կազմակերպությունների 14%-ը:

Մշակութային հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրման արդյունքում օպերային թատրոնում 2023 թվականի նկատմամբ կրկնակի ավելացել է ցուցադրվող ներկայացումների քանակը՝ հասնելով 260-ի, կրկնապատկվել է նաև հանդիսատեսի քանակը՝ 90 000-ից հասնելով 180 000 հանդիսատեսի՝ տարեկան ապահովելով եկամուտների մինչև 20% աճ և վարձատրության 37% բարձրացում: Տիկնիկային թատրոնում ներկայացումների քանակն ավելացել է 334-ով՝ հասնելով 831-ի, հանդիսատեսի քանակը՝ 73 000-ից հասնելով 119 600-ի՝ տարեկան ապահովելով եկամուտների մինչև 35% աճ և աշխատավարձերի մինչև 50% բարձրացում: Կամերային թատրոնում ներկայացումների քանակն ավելացել է 78-ով՝ հասնելով 243-ի, հանդիսատեսի քանակը՝ 19 342-ից հասնելով 29 390-ի՝ տարեկան ապահովելով եկամուտների մինչև 22% աճ և աշխատավարձերի մինչև 50% բարձրացում:

2025 թվականից դրամաշնորհային պայմանագրերում առկա են խրախուսման մեխանիզմներ՝ եկամուտների ավելացման և ոչ ֆինանսական ցուցանիշները կատարելու համար:

2025 թվականին թատրոնների սեփական եկամուտները 2022 թվականի նկատմամբ աճել են 1,75 մլրդ ՀՀ դրամով կամ 1,5 անգամ, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 1,15 մլրդ ՀՀ դրամից դարձել է 2,9 մլրդ ՀՀ դրամ՝ 25%-ից հասնելով 38%-ի: Համերգային կազմակերպությունների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 745 մլն ՀՀ դրամով կամ 1,5 անգամ, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 486 մլն ՀՀ դրամից դարձել է 1,23 մլրդ ՀՀ դրամ՝ 12%-ից հասնելով 24,5%-ի:

Պատկեր 1. Մշակութային կազմակերպությունների սեփական եկամուտների աճը 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ



Պատկեր 2. Մշակութային կազմակերպությունների սեփական եկամուտների մասնաբաժնի ավելացումը եկամուտների ընդհանուր ծավալում 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ

Արվեստագետների ու ստեղծարար ոլորտի զարգացումը խթանելու նպատակով՝ ներդրվել է միջազգային հեղինակավոր փառատոներին մասնակցելու և մրցանակների արժանանալու դեպքում պետության կողմից դրամական խրախուսման՝ պարգևավճարի սահմանման մեխանիզմը (ամսական դրամական խրախուսումը՝ 130 հազար – 800 հազար ՀՀ դրամ): 2025 թվականին ծրագրի շահառու է դարձել 11 արվեստագետ և 8 կազմակերպություն, հատկացվել է շուրջ 122,9 մլն ՀՀ դրամ: 2024 թվականի համեմատ անհատ շահառուների թիվը գրեթե եռապատկվել է, կազմակերպություններինը՝ կրկնապատկվել:

Մշակույթի և ստեղծարար ոլորտի ձեռքբերումների արժևորման նպատակով՝ համատեղ իրականացվել են 4 մրցանակաբաշխություններ, այդ թվում՝ «Խազեր», «Ռեանիմանիա» կինոփառատոնի «Ռեակոմիքս», «ԱՍԱ» մրցանակաբաշխությունները:

Մշակութային և ստեղծարար ոլորտներում ինքնազբաղ ստեղծագործողների գործունեությունը խթանելու նպատակով 22 խմբերի և 58 անհատ կատարողների հնարավորություն է ընձեռվել մասնակցելու միջազգային միջոցառումների (այդ թվում՝ միջազգային մրցույթ, փառատոն, բիենալե և վարպետության դաս), որոնց համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 22,5 մլն ՀՀ դրամ:

Մեկնարկել է 39 դրամաշնորհային ծրագիր:

Կազմակերպվել է 2 սեմինար Արտնեքսուս ծրագրի շրջանակներում, 1 սեմինար՝ ԱՍԱ հարթակի միջոցով, ինչպես նաև 40 առցանց և ուղիղ հանդիպում-խորհրդատվություն արվեստագետների հետ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ մրցութային դրամաշնորհի շրջանակներում, աջակցություն են ստացել 3 առցանց կայքեր, որոնք տարեկան կտրվածքով վերլուծական, քննադատական հոդվածներ են պատրաստելու Հայաստանի թատերական կյանքի վերաբերյալ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացվող մեկ այլ դրամաշնորհի միջոցով խթանվում է գրողների, գրականության թարգմանիչների, գրաքննադատների գործունեությունը: «Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» ծրագրով 2025 թվականին հրատարակվել են 33 հեղինակների աշխատանքներ: Աջակցություն է տրամադրվել 10 լեզվով 8 գրքի թարգմանությանը՝ նախորդ տարվա 9 լեզվով 17 գրքի փոխարեն:

Հաջողությամբ իրականացվել է Ժամանակակից արվեստի ոլորտում արվեստի կացարաններ և աշխատարաններ ծրագիրը՝ Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի, Գեղագիտության ազգային կենտրոնի, մարզային Լոֆտերի կողմից:

Ընդունվել է «Մշակութային աճուրդների մասին» օրենքը և այդ օրենքի կիրարկումն ապահովող 1 իրավական ակտ:

Ընթերցանությունը խթանող ծրագրերի շրջանակում իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված Գիրք նվիրելու օրվան, ինչպես նաև կազմակերպվել է Մանուշյանական շաբաթը:

Իրականացվել է Երևանյան գրքի միջազգային փառատոնը: Իրականացվել են 50-ից ավելի միջոցառումներ: Գրքի ցուցահանդես-տոնավաճառին մասնակցել են շուրջ 50 կազմակերպություններ Հայաստանից և 10 երկրից: Փառատոնին մասնակցել են անվանի գրողներ, գործակալներ և հրատարակիչներ Միացյալ Թագավորությունից, Իտալիայից, Լատվիայից, Վրաստանից, Ռուսաստանից, Չեխիայից, Հունաստանից, Նիդերլանդներից, Իրանից և Միացյալ Նահանգներից: Միջոցառումներին մասնակցել են 200-ից ավելի գրողներ, թարգմանիչներ և քննադատներ: Վաճառվել է 18 000 գիրք, փառատոնն ունեցել է 40 000-ից ավելի այցելու (2024 թվականի 30 000-ի փոխարեն): 2025 թվականին առաջին անգամ փառատոնն ունեցավ նաև մարզային երկու այց՝ Գյումրի և Կապան): Անցկացվել է նաև Հանրապետական գրական մրցույթ, որին մասնակցել է 361 գրող, իսկ Վ.Սարոյանի անվան միջազգային մրցույթին՝ 108 գրող 25 երկրից:

Պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնման, մշակութային ներդրումների և բարեգործության խթանման, մշակույթի մեկենասության վարկանիշի ձևավորման համատեքստում կազմակերպվել են տեղեկատվական արշավներ: Իրականացվել է Ֆաստեքսի, Թումոյի, Կերոնի և այլ հովանավորների ներկայացվածության ապահովում և գովազդում տարբեր հարթակներում:

Մեկենասության ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորման նպատակով մշակվել է Օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագիծ, որի մշակման աշխատանքներն

իրականացվել են ԵՄ Արտնեքսուս և Կատապուլտ ծրագրերի համակարգող թիմերի և ՀԲԸՄ-ի հետ համատեղ:

Մշակութային հաստատությունների ֆոնդահայթայթման կարողությունների զարգացման նպատակով իրականացվել են վերապատրաստման ծրագրեր՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ընդհանուր առմամբ, ծրագրերին մասնակցել են մշակութային կազմակերպությունների և 21 ՊՈԱԿ-ների աշխատակիցների շուրջ 40 %-ը:

Համերգասրահների և թատրոնների ենթակառուցվածքների բարելավման, տեխնիկական վերազինման, ինչպես նաև՝ հաշմանդամության խնդիրներ ունեցող անձանց համար հարմարավետություն և հասանելիություն ապահովելու նպատակով

2025 թվականին կապիտալ հատկացումներ են կատարվել 10 թատերահամերգային կազմակերպություններում, որոնց թվում՝ Գորիսի, Վանաձորի թատրոնների շենքերի նախագծանախահաշվարկային և Սիմֆոնիկ նվագախմբի շենքի շինարարական աշխատանքների ու երաժշտական գործիքների, Արամ Խաչատրյան համերգասրահի շինարարական աշխատանքների և վերելակի ձեռքբերման, Օպերային թատրոնի բալետային հատակի, Ստանիսլավսկու թատրոնի աթոռների, Համազգային թատրոնի, Արտաշատի և Գյումրու թատրոնների համար լուսաձայնային տեխնիկայի կամ այլ գույքի ձեռքբերման, իսկ Կամերային երաժշտության կենտրոնի համար՝ երաժշտական գործիքների ձեռք բերման համար՝ ընդհանուր շուրջ 1,1 մլրդ դրամի չափով:

Գործիքներ են ձեռք բերվել նաև Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի կամերային նվագախմբի համար՝ 2 տավիղ, 1 չելեստա, 2 կլարնետ, 1 հարվածային գործիք (Գոսեր), 1 թմբուկ, 2 կոնտրաբաս, 1 վիբրոֆոն, 1 գոնգ, 1 հարվածային գործիքների կոմպլեկտ: Սևանի երաժշտական դպրոցի համար ձեռք են բերվել՝ 1 ռոյալ, 19 դաշնամուր, ինչպես նաև 46 նոտակալ, ուսումնական երաժշտական պաստառներ և գույք:

Համեմատության համար նշենք, որ 2024 թվականին վերանորոգվել է 3 թատրոն և 1 համերգասրահ (Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոն, Սոս Սարգսյանի անվան «Համազգային» թատրոն, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, Արամ Խաչատրյան համերգասրահ), 3 կազմակերպության համար ձեռք է բերվել 19 երաժշտական գործիք (Հայաստանի պետական ֆիլհարմոնիա, Կամերային երաժշտության ազգային կենտրոն, Հայաստանի էստրադային ջազ նվագախումբ)՝ ընդհանուր 400 մլն դրամ արժողությամբ:

Ընդհանուր առմամբ ավելի քան 947 մլն ՀՀ դրամի ներդրումներ են արվել թատերահամերգային հաստատությունների շենքային պայմանների բարելավման, գույքով ու երաժշտական գործիքներով ապահովման համար:

Ինչպես նաև ստեղծագործական միություններին պատկանող գույքի առավել արդյունավետ գործադրում իրականացնելու նպատակով, ՊՈԱԿ-ների և ստեղծագործական միությունների միջև կնքել են համագործակցության պայմանագրեր/համաձայնագրեր: Նշված ձևաչափով Հայաստանի նկարիչների միության և Հայաստանի կինոգործիչների միության հարթակները լայնորեն օգտագործվել են ցուցահանդեսներ, մշակութային ծրագրեր իրականացնելու համար (հոբելյանական

ցուցահանդեսներ նվիրված՝ Փարավոն Միրզոյանին, Հարություն Խաչատրյանին, Պատկերապատման փառատոնին, այլ անվանի նկարիչներին, Արվեստի օր միջոցառմանը և այլն): ՀՀ կոմպոզիտորների միության հետ համատեղ իրականացվել է Հայ կոմպոզիտորական արվեստի հանրապետական փառատոնը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարությամբ ամրագրված առաջնային նպատակներից է հասարակության ստեղծարար ընդգրկվածության ապահովումը մշակութային կյանքին, մշակույթի և արվեստների դերի ընդլայնումը երկրի կայուն զարգացման գործընթացներում:

Ազգային ավանդույթների, փոների, ժողովրդական և հայրենասիրական երաժշտության բնակչության կենցաղ ներմուծման նպատակով 2025 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում տեղի է ունեցել «Արհեստների միջազգային 4-րդ փառատոնը»: Արուճում անցկացվել է Հոգևոր երաժշտության փառատոն, իրականացվել են «Օրատորիա-Միստերիա «Է»» և «Ակունքներ» երաժշտական նախագծերը: Ընդհանուրը՝ 12 միջոցառում (այդ թվում՝ մշակութային Ժառանգության ոլորտում՝ 4, ժամանակակից արվեստի ոլորտում՝ 8):

Մշակույթի ապակենտրոնացման համատեքստում համայնքներում իրականացվող մշակութային նախագծերում ապահովվել է ՀՀ բոլոր մարզերի ընդգրկվածությունը:

Մարզերում իրականացվել են ծրագրեր՝ 10 փառատոն, այդ թվում՝ Կապանի երաժշտական փառատոնը, Երգեհոնային փառատոնը, Ֆեստիվառ փառատոնը, Հուսո առագաստ փառատոնը, Գավառի թատերական շաբաթը, Ջերմ Ամանոր Ջերմուկում փառատոնը և այլն:

Թատերահամերգային կազմակերպությունների համար ամրագրվել է մարզային գործունեության պարտադիր լինելու պահանջը, ուստի իրականացվող միջոցառումների զգալի մասը նաև ուղղված են մարզերում ոլորտային փառատոնային հարթակների որոշարկմանը և մարզային փառատոների հիմնմանը՝ այդ թվում՝ Գեղարքունիքի մարզում՝ թատերական շաբաթը, Սյունիքի մարզում՝ երաժշտական փառատոնը, Լոռու, Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ թատերական փառատոները և կերպարվեստի պլեներները, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում՝ հեղինակային երգի փառատոները: Ֆեստիվառ շրջիկ երաժշտական փառատոնն անցկացվում է յուրաքանչյուր տարի՝ երեք մարզում: Ընդհանուրը՝ 10 փառատոնային ծրագիր: 2025 թվականին Ֆեստիվառ փառատոնն անց է կացվել՝ Արտաշատ, Հրազդան և Արմավիր քաղաքներում: Անկախության օրը նշանավորվել է «Ֆեստիվառ» փառատոնով Արմավիրում (շուրջ 20 000 հանդիսատես, 39 տաղավար տնտեսավարողների համար):

Հավելենք, որ թատրոնի միջազգային օրվա և թատերական շաբաթվա շրջանակներում, թատրոններ է այցելել մոտ 5 200 հանդիսատես, դպրոցականների համար կազմակերպվել են վարպետության դասեր, շրջայցեր թատրոններ, հանդիպումներ անվանի և ճանաչված դերասանների ու ռեժիսորների հետ:

Մարզերի մշակութային կյանքի ակտիվացմանը մեծապես նպաստել է նաև պետական դրամաշնորհային ծրագիրը, որը հնարավորություն է ընձեռել ոչ միայն ծրագրեր իրականացնել մարզերում, այլ առաջին հերթին աջակցություն ցուցաբերել համայնքային մշակութային կազմակերպություններին՝ ապահովելով համայնքային ներգրավվածություն:

Իրականացվել են 6 մրցութային դրամաշնորհներ, որոնք անց են կացվել Լոռիում, Շիրակում, Արագածոտնում, Տավուշում, Սյունիքում, ինչպես նաև 15 այլ մրցութային ծրագրեր՝ Օպերային թատրոնի սեզոնի բացումը Ստեփանավանում, ՀԱՖՆ-ի համերգային և Համազգային թատրոնի հյուրախաղերը ՀՀ մարզերում և այլն: Նաև 2025 թվականին հանդիսավորությամբ նշվել է Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակը:

Մշակութային և կրթական քաղաքականությունների ներդաշնակեցման համատեքստում՝

Մշակութային կրթության տարվա տրամաբանությամբ՝ շարունակվել են բաժանորդային ծրագրի, «Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի ու ևս 10 դրամաշնորհային ծրագրերի իրականացումը:

Ինչպես նաև «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի շրջանակում մշակվել և հրատարակվել է 10 առարկայական ծրագիր՝ «Տուբա», «Գալարափող», «Տրոմբոն», «Կլարնետ», «Հոբոյ», «Սաքսոֆոն», «Ֆլեյտա», «Շեփոր», «Ֆագոտ» և «Արվեստի պատմություն. Պարարվեստ»:

2023-2025 թվականներին հրատարակվել է ընդհանուր թվով 50 ձեռնարկ:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար ձեռք է բերվել 11 անուն (27 հատ) գործիք, այդ թվում՝ դաշնամուրներ, ջութակներ, քանոններ, սանթուր, քամանչա, դուդուկներ, ուդ, շեփոր, ֆլեյտա, թավջութակ, թառ: 2024-2025 թվականներին ընդհանուր ձեռք է բերվել 54 հատ գործիք:

Իրականացվել է 21 մանկապատանեկան ծրագիր, այդ թվում՝ «Մեկնարկ», «Խաղաղություն» մանկապատանեկան նկարչական մրցույթ-ցուցահանդեսը, «ԳԱԿ. Մշակութային խաչմերուկ», «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա», «Դասարան+Դասական», «Քույր դպրոցներ», «Դպրոցականի ֆիլհարմոնիա» ծրագրերը և այլն: Շահառուների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 37 200 մասնակից:

Իրականացվել է «ԴասԱրվեստ» կրթամշակութային ծրագիրը, որի համար պետական բյուջեից տրամադրվել է 12 մլն ՀՀ դրամ: Այն իրականացվել է ՀՀ 10 մարզերի 18 բնակավայրում: Ծրագիրը նախատեսված է դպրոցական տարբեր տարիքային խմբերի համար՝ կրտսեր, միջին և ավագ: Ծրագրին մասնակցել է շուրջ 1 000 աշակերտ:

Շարունակվել է «Մեկնարկ» նպատակային ծրագիրը: Ծրագրում ամեն տարի ընդգրկվում է 15 տաղանդավոր երաժիշտ-կատարող: Ծրագրի շահառուները մասնակցել են Հայաստանում և արտերկրում կազմակերպված 26 վարպետության դասերի և 21 նախագծի: «Մեկնարկ» նպատակային ծրագրին մասնակցել է ընդհանուր թվով շուրջ 30 երաժիշտ-կատարող:

Կազմակերպվել է նաև հեղինակային երգի հանրապետական 2-րդ մրցույթ փառատոն դպրոցահասակ երեխաների և երիտասարդների շրջանում՝ համապատասխան դրամական

պարգևներով (հաղթող մասնակիցները և մանկավարժները՝ 362 500-ական ՀՀ դրամ, ուսումնական հաստատությունները՝ 1,5-ական մլն ՀՀ դրամ), սահմանված է նաև 5 հատուկ մրցանակ՝ 250 000-ական ՀՀ դրամի չափով:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, աճել են «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակում այցելությունները թանգարաններ և թատրոններ՝ հասնելով շուրջ 357 370-ի, որից թանգարաններ է այցելել ավելի քան 159 665, թատերահամերգային կազմակերպություններ՝ 197 705 աշակերտ՝ 2024 թվականի ցուցանիշը գերազանցելով շուրջ 57 370-ով: 2025 թվականի շահառուների թիվը 55,5%-ով գերազանցում է 2023 թվականի նույն ցուցանիշը, և ընդգրկում է հանրակրթական դպրոցներում սովորողների 84%-ը:

Գրադարաններում իրականացվել է 117 կրթական ծրագիր՝ 10793 մասնակից:

Միևնույն ժամանակ տարվա ընթացքում շարունակվել է ոլորտային մասնագետների մենթորության ծրագիրը՝ «Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» ծրագրի և «Քույր դպրոցներ» նախագծի շրջանակներում:

«Քույր դպրոցներ» ծրագրում ներառված են եղել հանրապետության 60 երաժշտական և արվեստի դպրոցներ, իսկ ծրագրի միջոցառումներին մասնակցել են ավելի քան 500 աշակերտներ և մանկավարժներ, կազմակերպվել է 20 միջոցառում, իրականացվել է ավելի քան 60 վարպետության դաս:

«Ժամանակակից արվեստի աշխատարաններ» ծրագիրն ունեցել է 3345 շահառու՝ 21.5%-ով ավելի նախորդ տարվանից:

Ներառականության ապահովման շրջանակներում տարվա կտրվածքով իրականացվել է 7 ծրագիր, այդ թվում՝ «Կողք կողքի», «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոնը, «Hope for dream» կրթամշակութային ծրագիրը, «Ճախրուկ» ամենամյա միջազգային 5-րդ ներառական փառատոնը: Նշված ծրագրերին մասնակցել են շուրջ 1900 սահմանափակ կարողություններով անձինք (2024 թվականի համեմատ ցուցանիշի աճը 30%-ից ավելի է):

Ընդհանուր առմամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններում և գրադարաններում իրականացված կրթական ծրագրերին մասնակցել են շուրջ 1550 սահմանափակ կարողություններով անձինք:

Կարողությունների զարգացման ուղղությամբ մշակույթի և արվեստի ոլորտների կազմակերպիչների՝ կուրատորների, պրոդյուսերների, գրական գործակալների համար ֆորմալ և այլընտրանքային կրթական ծրագրերի շրջանակում, իրականացվել է 8 ծրագիր, որոնց մասնակցել է 230 շահառու: Ժամանակակից արվեստի ոլորտում ծրագրերի թիվը տարեկան կտրվածքով ավելացել է 2-ով: Նշված ծրագրերն իրականացվել են Հայաստանում կազմակերպվող փառատոների և այլ արվեստագիտական հանդիպումների շրջանակներում, մասնավորապես՝ Արմմոնո, Հայֆեստ և Սամմիթ փառատոների, արվեստագիտական ռեզիդենսների շրջանակում:

Շարունակվել է արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցի մանկավարժական աշխատողների ատեստավորման գործընթացը: 2025 թվականի ատեստավորմանը մասնակցել է 5 ուղղության 151 մանկավարժ, որից նվազագույն շեմը հաղթահարել և ատեստավորված է համարվել 64-ը կամ շուրջ 42 %-ը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մշակութային և արտաքին քաղաքականության համադրման ու ներդաշնակեցման ուղղությամբ՝

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Մշակութային խաչմերուկ» երևանյան միջազգային կոնֆերանսը, որը նվիրված էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակութային բազմազանության պահպանության կոնվենցիայի» 20-ամյակին: Կոնֆերանսին մասնակցել են 18 երկրի և 6 միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ: Համաժողովի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարության և շվեդական «Արտնեքսուս» կազմակերպության միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր 2025-2027 թվականների համար:

Ինչպես նաև 2025 թվականի նոյեմբերի 24-ին Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում անցկացվող Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի անդամ պետությունների գլխավոր ասամբլեայի 25-րդ նստաշրջանի շրջանակում, Հայաստանի Հանրապետությունն առաջին անգամ ընտրվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ:

Ընտրությունների՝ ազատ տեղերի համար նախատեսված փուլում Հայաստանը գրանցել է լավագույն արդյունքը՝ ստանալով հնարավոր 161-ից 105 ձայն, ինչը վկայում է մշակութային ժառանգության պահպանման ոլորտում Հայաստանի նկատմամբ միջազգային հանրության բարձր վստահության մասին:

Ստանձնելով Համաշխարհային ժառանգության կոմիտեում անդամակցությունը՝ Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է իր հանձնառությունը՝ ուղղված մշակութային և բնական ժառանգության պատշպանության, պահպանման և վերականգնման, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հիմնարար սկզբունքների առաջմղման գործում միջազգային ջանքերի խթանմանը:

«Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի շրջանակներում 2025 թվականին Հայաստանից հաստատվել է 5 համագործակցային հայտ, շուրջ 250 000 եվրո ընդհանուր բյուջեով՝ նախորդ տարվա 150 000 եվրոյի համեմատ:

Հայաստանը մասնակցել է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրին «Ճարտարապետական ժառանգություն» խորագրով՝ ավելի քան 210 միջոցառումով և «Եվրոպական հնագիտության օրերը» ծրագրին՝ շուրջ 10 միջոցառումով:

Հայաստանը մասնակցել է նաև Կիգալիում կայացած Ֆրանկոֆոնիայի նախարարական 46-րդ հանդիպմանը: Ֆրանկոֆոնիայի մշակույթի նախարարների համաժողովի շրջանակներում որոշում է կայացվել, որ հաջորդ համաժողովը կկայանա Երևանում՝ 2027 թվականին:

Նոյեմբերի 20-21-ը Երևանում կայացել է Հայ արվեստի և մշակույթի համաժողովը, որին մասնակցել է 284 հոգի 36 երկրներից: Համաժողովին մասնակցել են 14 երկրներից հրավիրված 60 նիստավարներ և բանախոսներ:

2025 թվականին մեկնարկել է Հայաստան-ԵՄ մշակույթի ոլորտում երկխոսությունը: Տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ համակազմակերպման ձևաչափով՝ «Մշակույթի հարցերով քաղաքականության շուրջ» խորագրով առաջին աշխատաժողովը:

2025 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում են ընդգրկվել «Երևանի ուրարտական ժառանգությունը» և «Գառնի հնագիտական համալիրը և ««Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ» հայտերը:

Իրականացվել են «Տիրինկատար հնավայրի վիշապաքարերը և մշակութային լանդշաֆտը» հայտը նախնական ցանկից հիմնական ցանկ ընդգրկելու ուղղությամբ աշխատանքները:

Հրաչյա Աճառյանի ծննդյան 150 և Երևանի Հանրապետության հրապարակի շինարարության մեկնարկի 100-ամյակները ներառվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հոչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2026-2027թթ. օրացույցում:

Մշակույթի ոլորտում ՀՀ-ն անդամակցել է 10 միջազգային մասնագիտական կառույցների, այդ թվում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին, Եվրիմաժին, Եվրամիությանը, Եվրոպական աուդիովիզուալ օբսերվատորիային, ICOM-ին, ICCROM-ին, Երաժշտական ասոցիացիային և այլն:

Մշակութային առաջնահերթ շուկաների որոշարկման ուղղությամբ ապահովվել է մասնակցություն հետևյալ հարթակներում՝ Վենետիկի, Մալթայի և Ֆլորենցիայի բիենալեներ, մշակութային էքսպոներ՝ Բերգրադում, գրահրատարակչության ոլորտում՝ Ֆրանկֆուրտի, Բոլոնիայի գրքի տոնավաճառ Աբու Դաբիի, Պեկինի և Լայպցիգի գրքի տոնավաճառներ:

Հայ գրականության հանրահռչակման ուղղությամբ արտերկրում՝ իրականացվել է 3 գրողի մասնակցություն՝ գրական արվեստագիտական ռեզիդենսի: Կազմակերպվել է օտար լեզուներով հայ գրականության հրատարակությունների դրամաշնորհային մրցույթը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել 8 շահառու:

Հայ-չինական գրական համագործակցության համատեքստում, տարվա կտրվածքով հրատարակվելու է 5 գիրք:

Միջազգային մշակութային մասնագիտական հարթակներում հայկական մշակույթը ներկայացվել է տարբեր թատերական և կինոփառատոների, կինոմրցանակաբաշխությունների, Վենետիկի, Ֆլորենցիայի, Սենտ էտյենի կերպարվեստի Բիենալեներին և այլն: Ընդհանուր թվով՝ 10 մասնակցություն:

Ապահովվել է նաև մասնակցություն մի շարք միջազգային թիրախային միջոցառումների: Մասնավորապես Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, կայացել է ՀԱՖՆ համերգ՝ նվիրված Շառլ Ազնավուրի հոբելյանին: Ինչպես նաև ՀԱՖՆ 100-ամյակի շրջանակներում, կայացել է համերգ Իրանում՝ Պերսեպոլիսում: Անցկացվել են՝ Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգներ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում,

Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի համերգներ Գերմանիայում: Իրականացվել է «Արամ Խաչատրյան» արտագնա մրցույթի անցկացում Չինաստանում:

Մշակութային դիվանագիտություն. Հայաստանի ճանաչելիության բարձրացում

Ի թիվս ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում իրականացված միջոցառումների, Հայաստանը մասնակցություն է ունեցել նաև՝ Վենետիկի ճարտարապետական 19-րդ միջազգային բիենալեին (Հայաստանի տաղավար այցելել է ավելի քան 10 000 մարդ), Սերբիայի փառատոնին, Միլանի բիենալեին, Օսակայի էքսպոյին, թատերական հեղինակավոր հարթակներում՝ Էդինբուրգ, Ավինյոն:

Ներկայում Հայաստանը անդամակցում է 10 միջազգային մասնագիտական կառույցների /միավորումների/:

Հայկական կինոժառանգության միջազգայնացման ուղղությամբ՝ մասնակցություն է ապահովվել Բեռլինի, Կաննի, Անսիի և Լոկառնոյի միջազգային կինոփառատոներին՝ համապատասխանաբար 4 ֆիլմով, Բանգկոկի կինոմրցանակաբաշխությանը, Օսկարի մրցանակաբաշխությանը ներկայացվել է «Իմ հայկական ուրվականները» հայ-ֆրանսիական արտադրության վավերագրական ֆիլմը /ռեժ. Թ. Ստեփանյան/, Լիսաբոնի Սինեմատեկում անցվացվել է Ս.Փարաջանովին նվիրված միջոցառում:

Կաթոլիկ Եկեղեցու հոբելյանի կապակցությամբ, Վատիկանի առաքելական գրադարանի Սիքստինյան սրահում իրականացվել է «Սիգմա» կարճամետրաժ ֆիլմի /ռեժ.Ա. Մանուկյան/ ցուցադրությունը: Լոկառնոյի միջազգային կինոփառատոնի բացման ֆիլմ է եղել ֆրանս-հայկական արտադրության «Արտոյի երկիրը» լիամետրաժ խաղարկային ֆիլմը /ռեժ. Թ. Ստեփանյան/:

Տարվա ընթացքում ընդհանուր թվով 15 ֆիլմ մասնակցել է 58 միջազգային կինոփառատոների և հարթակների՝ շահելով 15 մրցանակ: Վերջին 2 տարվա ընթացքում կինոյի ոլորտում ընթացող ակտիվ օրենսդրական աշխատանքները, կինոյի ներդրումների մասնակի վերադարձի մեխանիզմների մշակումն ու Հայաստանի կինոյի հիմնադրամի՝ նոր տրամաբանությամբ գործունեությունը, անշուշտ մեծ խթան են հանդիսացել հայկական կինոարտադրության զարգացման ու ներկայանալի դառնալու գործընթացում: Համագործակցության և Փոխըմբռնման հուշագրեր են կնքվել «Ստեղծարար Հունաստան՝ Հունաստանի կինոյի և աուդիովիզուալ կենտրոնի» և «Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության Կինոյի և տեսալսողական հարցերի կազմակերպության» հետ:

Ապահովվել է առաջատար խմբերի և արվեստագետների հյուրախաղեր, Ժողովրդական արվեստների և արհեստների ցուցադրություններ այլ երկրներում: Ընդհանուր առմամբ 21 թատերահամերգային կազմակերպություններ, 58 անհատ արվեստագետ և 10 մշակութային այլ խմբեր հյուրախաղերով հանդես են եկել արտասահմանյան 25 երկրում՝ ներկայացնելով հայկական մշակույթն ու արվեստը:

Ներդրվել է Հայաստանում համաշխարհային գերաստղերի հյուրընկալման ամենամյա ծրագիրը: Այս շրջանակներում որպես առաջին միջոցառում 2025 թվականին Հայաստանում

կայացել է համաշխարհային աստղ Ջենիֆեր Լոպեսի համերգը, որին մասնակցել է 30 000 հանդիսատես, որից 15 000-ը՝ զբոսաշրջիկ:

Հայաստանում անցկացվել են Ղազախստանի և Վրաստանի մշակույթի օրերը: Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի է ունեցել Մեսրոպ Մաշտոցի անվան փողոցի բացումը: